ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ
A MEMORIAL NOTE



ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

Կյանքի 93-րդ տարում վախճանվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող Սերգեյ Ներսեսի Սարինյանը:

Վերլուծական մեծ մտքի տեր գրականագետը իր գրեթե 70-ամյա գիտական կենսագրությամբ՝ գիտական հետաքրքրությունների բացառիկ լայն շրջանակով, իր ուրույն տեղն ունի հայ գրականագիտության և գրաքննադատության պատմության մեջ: Իր ուսումնասիրությունների մեջ արծարծված բազմաթիվ հարցադրումներում նա մշտապես ցուցաբերել է մտքի ինքնատիպություն, խոր դիտողականություն և քննական-վերլուծական խոսքի դիպուկություն ու փաստարկվածություն:

Սերգեյ Սարինյանը ծնվել է 1924 թ. նոյեմբերի 17-ին, ԼՂՀ Ասկերանի շրջանի Սեյդիշեն (այժմ՝ Խաչեն) գյուղում: 1941 թ. աշխատանքի է անցել ծննդավայրի դպրոցում: Մանկավարժական գործունեությունն ընդհատվել է 1942 թ., երբ զորակոչվել է բանակ՝ մասնակցելու Հայրենական մեծ պատերազմին: 1943 թ. զորացրվել է վիրավորվելու հետևանքով:

1944–1949 թթ. սովորել է ԵՊՀ բանասիրության ֆակուլտետում և ավարտել գերազանցության դիպլոմով, ապա ընդունվել Գիտությունների ակադեմիայի ասպիրանտուրա:

1953 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ռեալիզմի սկզբնավորումը հայ գրականության մեջ» թեմայով: Այն, իբրև մենագրություն, տպագրվել է 1955 թ.:

Հիմնավորելով գրականության պատմության խնդիրների գիտական լուծման տեսակետից գրական ուղղությունների ձևավորման ու զարգացման գործընթացի ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ գիտնականը վերհանում է այն օրինաչափությունները, որոնք նպաստել են հայ նոր գրականության ինքնությանը՝ «պրոգրեսիվ ռոմանտիզմի և քննադատական ռեալիզմի ուղղություններով»: Աշխատության մեջ Սարինյանն անդրադառնում է «Հյուսիսափայլ»-ի կատարած լուրջ քայլերին քննադատական ռեալիզմի տեսական դրույթների մշակման ուղղությամբ, ամսագրի էջերում տպագրված արձակի, պոեզիայի բերած նոր մոտիվներին, առանձին բաժին է հատկացնում քննադատական ռեալիզմի սկզբնավորմանը արևմտահայ գրականության մեջ 50–60-ական թթ., քննադատական ռեալիզմի զարգացմանը, արժեվորում է Մ. Նալբանդյանի դերը, պայքարը քննադատական ռեալիզմի մեթոդի արմատավորման համար:

1957 թ. հրատարակվում է Ս. Սարինյանի «Ռաֆֆի» մենագրությունը, որը ծավալուն, ամբողջական և համակարգված ուսումնասիրություն էր հայ գրականության դասականի կյանքի ու գործունեության, ստեղծագործության մասին՝ ենթարկված գիտական պարբերացման:

1964 թ. լույս տեսած «Գրական դիտողություններ» գրքում ամփոփված հոդվածները նվիրված էին XIX դ. և սովետահայ գրականության պատմության ու տեսության հարցերին: Դրանք նաև նպատակաուղղված էին հայտնաբերելու ընթացիկ գրականության զարգացման օրինաչափությունները, ժամանակակակից գրականության ձեռքբերումներն ու թերությունները: Գրքում շոշափված բազում խնդիրներ գիտնականի հետաքրքրության տեսահորիզոնում մնացին հետագա տարիներին ևս: Դրա վառ ապացույցն է 1966 թ. լույս տեսած «Հայկական ռոմանտիզմ» մենագրությունը՝ նվիրված հայկական ռոմանտիզմի տեսությանն ու պատմությանը: 1967 թ. գիտնականն այն պաշտպանեց իբրև դոկտորական ատենախոսություն: Ս. Սարինյանն աշխատության մեջ ցույց է տալիս ռոմանտիզմի ձևավորման նախադրյալները, ռոմանտիզմի ամրակայումը, դրա բնույթն ու էությունն իբրև գաղափարախոսություն, ռոմանտիզմի դրսևորումները այդ ուղղության և ռեալիզմի սահմանագծում:

«Մուրացան. տիպաբանություն, էթիկան, պատմության փիլիսոփայությունը» (1976 թ.) աշխատության մեջ Մուրացանի արվեստի տիպաբա-

նությունը բացահայտելու առումով Ս. Սարինյանն անում է հետաքրքիր նկատումներ: Ունենալով այն համոզմունքը, որ գեղարվեստական երկը կազմավորվում է գրողի ներաշխարհի, զգայական-հոգեբանական ազդակների, հայացքների ու ըմբռնումների հիման վրա՝ Սարինյանն իր ուսումնասիրության մեթոդական տեսանկյուններից մեկն է դարձնում գրողի ստեղծագործական անհատականության դրսևորումը նրա գեղագիտական համակարգում, անդրադարձ է կատարում գրողի աշխարհայացքին՝ իբրև ստեղծագործական անհատականության էական գործոնի:

Արժեվորելով գրականագետների ներդրումը Մուրացանի ստեղծագործության գեղարվեստական մեթոդի տիպաբանական առանձնահատկությունների ուսումնասիրության խնդրում՝ Սարինյանը քննարկում է, վերհանում տարակուսանքների առիթ տվող հարցադրումները, մղում ներքին բանավեճ կնճռոտ հարցերի շուրջ:

Տասնամյակներ անց գիտնականը վերստին անդրադառնում է իր ուսումնասիրություններին՝ վերահրատարակելով թե՛ Մուրացանին, թե՛ Ռաֆֆուն նվիրված մենագրությունները: Սակայն, ինչպես ինքն է նշում, դրանք նույնական կրկնություն չէին: Կուտակելով հարուստ նյութ, մշտապես ուսումնասիրելով համաշխարհային գրականությունը, փիլիսոփայությանը վերաբերող ուսմունքների տեսությունները՝ Սարինյանը 1985 թ. տպագրում է իր բնույթով ու կառուցվածքով բոլորովին այլ ուսումնասիրություն՝ «Ռաֆֆի. գաղափարների և պատկերների համակարգը»՝ Ռաֆֆու «սիստեմների աշխարհում հայտնաբերելով պատկերային նոր մոդելներ, նշանագրային նոր հոսքեր»: Այստեղ կարևորվում է կյանքում տեղի ունեցող ներքին տեղաշարժերի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված աշխարհայացքային անցումների, երևույթների ներքին կապի բացահայտումը, ստեղծագործության սյուժետային տարածքներում գաղափարը կառուցող շերտերի վերհանումը, սյուժետային, հոգեբանական գլխավոր հանգույցների ընդգծումը, գեղարվեստական պատկերի առարկայական շարժման ընկալումը, ստեղծագործության կառուցվածքում գեղարվեստական պատկերները հանգուցող բառի, նախադասության կամ հատվածի որոնումը:

Գրականագիտական վերլուծություններում Ս. Սարինյանն առաջնորդվում էր պատմատիպաբանական հետազոտական մեթոդով:

1991 թ. տպագրվում է նրա «Լևոն Շանթ» մենագրությունը: Այստեղ էլ գիտնականն առաջադրում է հստակ տեսակետներ, կատարում է խոր եզրահանգումներ, տալիս է գրողի ստեղծագործությունների գեղագիտական

լուծումները նորովի ընկալելու բանալին, լուսաբանում Ճանթի ստեղծագործության կրած ազդեցությունները:

Գրականության պատմաբանն ու տեսաբանը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել ժամանակի գրական ընթացքը: Տարբեր տարիներին հրատարակվել են «Գրական դիտողություններ» (1964 թ.), «Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը» (1973 թ.), «Գրական դեմքեր» (1976 թ.), «Գեղարվեստական գրականության պատմականությունը» (1979 թ.), «Սերունդներ և ավանդներ» (1984 թ.), «Բանաստեղծի հայտնությունը» (1998 թ.), «Պարույր Սևակ: Բանաստեղծության գիտությունը» (2006 թ.), «Ի հեճուկս (Հուշերի երկրի առասպելը)» (2006 թ.), «Ճարունակվող լեգենդ» (2008 թ.)՝ նվիրված Զորի Բալայանի գրական և հասարակական գործունեությանը, «Հայտնության խորհուրդը կամ բանաստեղծության փիլիսոփայությունը» (2016 թ.), «Ի հեճուկս, ի գիտություն» (2016 թ.) գրքերը:

Ս. Սարինյանի հոդվածները յուրօրինակ ենթաբաժանումներով ամփոփված են «Հայոց գրականության երկու դարը» վեցհատորյակում (1988– 2015 թթ.): Իր վերլուծություններում նա կարողանում էր հաղթահարել բարդ բնագրերի դիմադրությունը, բացահայտել ստեղծագործության՝ շատերի համար անկռահելի հետագիծը, փիլիսոփայական նստվածքները, ժանրային յուրահատկությունները, պոետիկայի ինքնատիպությունը:

1998 թ. Ս. Սարինյանը լույս է ընծայում «Հայ գաղափարաբանությունը. պատմաքննական տեսություն» ուսումնասիրությունը, ուր լուսաբանվում են հայ գաղափարաբանության՝ «նորդարյա հայոց փիլիսոփայության» ձևավորման պատմությունը, զարգացման ընթացքը, ներկայացվում են ազատագրական գաղափարների պատմափիլիսոփայական տեսությունները:

Գիրքը վերստին հրատարակվել է 2005 թ. «Հայոց ազգային գաղափարաբանություն. պատմաքննական տեսություն» խորագրով: Իր ուսումնասիրությունը գիտնականը խարսխում է այն դրույթի վրա, որ «ազգային գաղափարաբանությունը տվյալ ազգի պատմության փիլիսոփայությունն է, ազգի մտավոր գործունեության ամբողջ փորձի տեսական համադրությունը՝ գիտական, գեղարվեստական, բանահյուսական, կրոնական և այլն»:

1950 թ.-ից Ս. Սարինյանի գիտական գործունեությունը կապված է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հետ: 1960 թվականից նա եղել է ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի վարիչը, հետո նաև հայ նոր գրականության պատմությունն ուսումնասիրող խմբի գիտական ղեկավարը՝ ցուցաբերելով կազմակերպչական մեծ ձիրք և վարպետություն: Նրա ղեկավարությամբ ստեղծվել են «Հայ նոր գրականության պատմութ-

յան» ակադեմիական հինգհատորյակը (1962–1979 թթ.), որը 1980 թ. արժանացել է ՀԽՍՀ պետական մրցանակի, «Հայ քննադատության պատմություն» երկհատորյակը (1985–1998 թթ.), «Հայ վեպի պատմություն» (2005 թ.), «Հայ գրականության պատմության» ակադեմիական վեցհատորյակի երրորդ հատորը (2015 թ.):

Մեծ է Ս. Սարինյանի ավանդը նաև կրթական ոլորտում: Նրա հեղինակած դպրոցական և բուհական դասագրքերով բազում սերունդներ են կրթվել, դասավանդել է բուհերում, և նրա ուսանողներից շատերն այսօր իրենց գործունեությունն են ծավալում գիտության ասպարեզում:

Գիտնականը տասնամյակներ շարունակ ղեկավարել է Գրականության ինստիտուտում գործող մասնագիտական խորհուրդը, ասպիրանտների աշխատանքները՝ ծանրակշիռ ներդրում ունենալով նաև գիտական նոր սերընդի պատրաստման գործում:

Ս. Սարինյանի վաստակի գնահատման վկայությունն են ստացած կոչումները, մրցանակներն ու շքանշանները: Պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» մեդալով, ԼՂՀ «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: 1970 թ. ստացել է պրոֆեսորի կոչում, 1990 թ.-ին ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, իսկ 1996 թ.՝ իսկական անդամ: 1985 թ. արժանացել է գիտության վաստակավոր գործչի կոչման, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր է (1980 թ.), Միքայել Նալբանդյանի անվան մրցանակի դափնեկիր (1986 թ.), ստացել է ՀՀ նախագահի մրցանակ (2005 թ.), պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով (2004 թ.), «Մովսես Խորենացի» մեդալով (2009 թ.):

Ս. Սարինյանն ուներ անկոտրում ոգի, որը նրան թույլ չտվեց ընկրկելու իր համար նախասահմանված դժվարությունների առաջ: Թերևս այդ մեծ կամքի, գրականությանը անձնադիր նվիրումի ու հազվագյուտ ներընմբռնողականության մեջ էր թաքնված ստեղծագործական եռանդուն աշխատունակությունն այդպես երկարատև պահպանելու գաղտնիքը:

Վստահ ենք, որ մեծ հետաքրքրություններ ներկայացնող նրա աշխատություններում արծարծված մտքերը, բանաձևումները ծնունդ կտան նորանոր հետազոտությունների, և դեռ կտրվի գիտնականի թողած հսկայական գիտահետազոտական ժառանգության համապարփակ գնահատականը:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՄԿԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի փոխտնօրեն